

ՍԵԴՐԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ, ՄԱՐԻԱ ԱԴԵԼԱՅԻԵ, ԼԱԼԱ ԿՈՄՆԵՆՈ, ՊԱՈՒՈ ԿՈՒՆԵՆՈ: ՂԱՐԱԲԱՂ: Հայ ճարտարապետության վավերագրեր, հատ. 19: (Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետ, ՀեՄՀ ԳԱ), Միլան, «Օ՛՛ՄՄ՛՛» հրատարակչություն, 1988, 109 էջ, լուս., քարտեզ.:

SETRAG MANOUKIAN MARIA ADELAIDE LALA COMNENO, PAOLO CUNEO. GHARABAGH. (Documenti di Architettura Armena.— Vol. 19.—Facolta di architettura del Politecnico di Milano; Accademia delle Scienze dell'Armenia Sovietica) —Milano: Edizione OEMME, 1988, 109 p., hot.

Մեր դարավոր պատմության ընթացքում տվել արցախահայությունը: Բարձր լեռներով արիության ու տոկունության մեայուն դասեր է շրջապատված, նրանք միշտ մարտնչել են հա-

նուն անկախության, ազատության ու ինքնորոշման: Ինչ դժվարության առաջ էլ որ կանգնել են՝ իրենց կտու կամով ու լեռնցու համառությամբ տեղի չեն տվել: Այդ են վկայում նաև այսօրվա արցախցիների ցուցաբերած համբերությունն ու հետևողականությունը դեռևս իր վերջնակետին չհասած արդարացի պահանջի լուծման ճանապարհին: Այս երկու տարին իր աղետալի դեպքերով ու հուզումնալի սպասումներով սրափեցրեց բոլորիս՝ մեր ազգային գիտակցությանը նոր հիմքերի վրա դնելով: 1988—89 թթ. դեպքերից յ վեր վերանայվում են մեր պատմության ու մշակույթի այն էջերը, որոնց մասին ակնարկելն անգամ «մեղդ էր»: Իսկ այսօր ժողովուրդը հնարավորություն ունի բարձրաձև «բարձ» գրականության միջոցով ֆաշիստիկ ինքն էլ՝ Արցախի ոչ հեռու անցյալին վերաբերող պատմությանն ու մշակութային հարուստ ժառանգությանը, և՛ ընդհանրապես Հայաստանի պատմության առաջօր փակի տակ դրված էջերին:

Սփյուռահայ մեր հայրենակիցները ևս անմասն չեն այս գուժում: Միլիոնավ գտնվող Խաղաղալի հայկական միությունը 1988 թ. մարտին, «Գարաբաղյան պայքար» թեմ օրերին, սուսգայիթյան հեղինակագործությունից անմիջապես հետո հրատարակեց «Գարաբաղ-փաստաթղթեր» իրապիտեն հատորը՝ Սեդրակ Մանուկյանի և Հերման Վաճառյանի ֆունդաշն աշխատանքով: 91 էջանոց, գեղեցիկ ձևավորված գրքում տեղ են գտել Արցախի պատմության մասը ու արյունալի էջերը, վերջին 70 տարիներին երկրամասի ֆաղափակում, մշակութային և հոգևոր կյանքի մասին նյութեր, անարդարացի ընկալման հետևանքով մինչև օրս շարունակվող ոսոնները: Իրավախախտումների ու հասարակական անկարգությունների ընդլայնված պատկերը, այս դեպքերը լուսաբանող բազմաթիվ ֆոտոեզրեր, ինչպես նաև հայ մամուլից վերցրած ծաղրանկարներ: 1988-ի աշնանը ի լրացումն այս հատորի լույս տեսավ «Գարաբաղի ճարտարապետությունը» վերնագրով գիրքը (իտալերեն և անգլերեն), որն անմիջապես ընդգրկվեց «Հայ ճարտարապետության վավերագրեր» մատենաշար՝ որպես հերթական՝ 19-րդ հատոր: Ըստ նախնական ծրագրի՝ շարքի 19-րդ հատորը պետք է ներկայացներ «Իրանական Ադրբեջանում» գտնվող հայկական հուշարձանները: Սակայն դեպքերի կտրուկ շրջադարձը պատճառ հանդիսացավ այդ ծրագրի փոփոխմանը:

Այսպիսով ՕկՄՄԷ հրատարակչության միջոցներով լույս է տեսել Գարաբաղի պատմությանն ու ճարտարապետությանը նվիրված երկհատորյակ, ինչպես նաև վերոնշյալ մատենաշարի 19-րդ պրակը: Վերջինս օտար ընթերցող հասարակչությանն է ներկայացնում (անգլերեն և իտալերեն տեքստերով) ծագումով և իսկությունը բուն հայկական արցախյան մեր եկեղեցիներն ու վանքերը, ամրոցներն ու խաչաբերքը:

«Գարաբաղի նամակառու պատմությունը»

հողավոր հեղինակել է Սեդրակ Մանուկյանը: Սա կարծես լրացումն է «Գարաբաղ-փաստաթղթեր» գրքի: Դարերի ընթացքում Արցախի տարածում եղել են կիսանկուսի իշխանություններ, Շահ Արախից հետո՝ մելիխություններ, որոնք ժվարել են բարձր լեռների գագաթներին՝ արդեն գոյություն ունեցող ամրոցներում, դրանք վերանորոգելով ու ամրափակելով դարձնելով: Իրանական հարձակումների ու ոսոնները իրանյան ժամանակաշրջանում (17—18-րդ դարեր) Խաղաղ Օրին սկսում է իր դիվանագիտական գործունեությունը, իսկ Դավիթ Բեկի գլխավորած ազգային-ազատագրական պայքարի տարածքը ընդգրկում է նաև Արցախը: 1805 թ. Գարաբաղն ամբողջությամբ անցնում է ցարական Ռուսաստանին: 1828 թ. Երևանի նահանգը ևս, ազատագրվելով պարսկական իշխանությունից, միանում է Գարաբաղին՝ կազմելու, այսպես կոչված, «Հայկական կովկասը»: Այս ժամանակ, շնորհիվ տիրող ֆեոդալական և տարածային համեմատաբար ավելի կայուն պայմանների, շրջանում բարելավվում և զարգանում է տրեյտեսական վիճակը: Սակայն 1868 թ. կազմվում է Երևանի գավառի նահանգը, որն իր մեջ ընդգրկում էր Քիֆլիսի և Երևանի նահանգների արևելյան հատվածները, ինչպես նաև Բաֆլի նահանգին հարող արևմտյան տարածքը՝ ներառյալ Առնային Գարաբաղը: Հայկական նահանգի երկու տասնամյակ տևած փոփոխությունները կայուն վիճակը վերստին խաթարվում է, ինչը խթանում է շրջանում բարձրների քնակեցմանը: Քոչվոր ցեղի ներկայացուցիչների և տեղացի հողագործների միջև սկսվում է անվերջ պայքար, որը դարձնակարգի ստանում է առավել սուր բնույթ: 1905 թ. սկսվում է բռնի լույս իմաստով պատերազմ հայերի և ազերիների միջև: Ռուսական կառավարիչներն ու հրահանգիչները ոչ մի միջոց չեն ձեռնարկում այս դեպքերի առաջն առնելու: Դաշնակցական կուսակցությունն իր ձեռքն է վերցնում ինքնապաշտպանական կողմերի դեկլարությունը: Ս. Մանուկյանը գրում է, թե բվում էր, որ հեղափոխությունը վերջ կգնի այս ամենին, սակայն իրավիճակն ավելի սրվեց: Մյուս կողմից, Քուրիան չէր հրաժարվել իր պանթուրֆական ու պանթուրանական ֆեոդալականությունից. կոխկրտելով անցնել Հայաստանը՝ միանալու Միջին Ասիայի իր կրոնակիցներին: Սակայն 1918 թ. մայիսի 24-ին հրոսակների մեծ բանակի ճանապարհորդ փակվեց Սարգսրաբաղում:

Հողավածագիցն այնուհետև պատմում է, թե ինչպես Անդրկովկասյան Ֆեդերացիայի լուծարվելու հետևանքով անմիջապես հետո Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը անկախ են հրոշակվում, սակայն այս ընթացքում էլ բավարարված հայեր են սպանվում: Բաֆլի և Բաֆլիի տիրելու և բոլշևիկյան Ռուսաստանին խանգարելու նպատակով անգլիացիք հայտնվում են Կովկասում: Հեղինակը մեղքերում է պատմաբան Քրիստոֆեր Ռոկերի սեկեստրությունը անգլիացիների այդ տարիներին վարած ֆաղափ-

կանոնային հետևանքների մասին. «Լարաբաղի  
հակատագրի համար վնասող էրան Բավլի բրի-  
տանական ազագ պաշտոնյա գեներալ Վ. Մ.  
Քոմպսոնի և իր հաջորդ՝ գեղապետ Գ. Ի. Շա-  
բրյուրբի որոշումները ...1918 թ. նոյեմբերին  
գեներալ Անդրանիկը լեհեային Ղարաբաղի (որի  
բնակչության 85 %-ը հայություն էր) մայրա-  
քաղաք Շուշին գրավելու վրա էր: Սակայն  
գեներալ Քոմպսոնը հրահանգեց դադարեցնել  
առաջխաղացումը. պատճառաբանելով, որ այդ  
խնդիրները պիտի լուծվեն Փարիզում կայանա-  
լիք խաղաղության կոնֆերանսում: Քիչ անց  
Քոմպսոնը Ղարաբաղի և Զանգեզուրի կառավար-  
չիչ-գեներալ կարգեց Խոսրով բեկ Սուլթանովին:  
Վերջինս Ղարաբաղում խոշոր կալվածատեր էր.  
պան-Քուրիայի մեծ պաշտպան, երիտթուրքերի  
հետ մտերմ հարաբերություն ուներ, իսկ հայ-  
յերի սարսափն էր: Քոմպսոնը դա պետք է իմա-  
ցած լիներ, բայց նա մոռանեց. ոչ ոմեղ մի հո-  
ղատեր կարող է լավ հնարավորություն ունենալ  
նշելու որևէ հեղափոխական շարժում: Ղարա-  
բաղի ժողովուրդը մերժեց նաևաչի Սուլթանովի  
իշխանությունը և պեղեց ինֆեռոնդան իր ար-  
դարացի իրավունք...»: Երկու երկրների (Հա-  
յաստան և Ադրբեջան) խորհրդայնացումից հե-  
տո ևս իրավիճակը մնաց շափագանց լարված.  
մինչև 1921 թ. մարտին Մոսկվայում կայացած  
նաս-թուրքական բանակցությունների հետևան-  
քով Ղարաբաղը «Քուրիայի ներման ներքո»  
մնաց Ադրբեջանի կազմում: Նույն թվի հունիսի  
25—27 կովկասյան բաղաժամանակ բյուրոյի հա-  
տուկ կոմիտեն, ստանց հաշվի առնելու հայոց  
պահանջները, նշեց Հայաստանի, Ադրբեջանի ու  
Վրաստանի սահմանները, Նախիջևանն ու Ղարա-  
բաղը բողոքելով Ադրբեջանի կազմում, իսկ  
Ախալքալաքը կցելով Վրաստանին: Անդրակ  
Մանուկյանը հետևյալ տողերով է վերջացնում  
իր հոդվածը. «Այդ ժամանակներից շատ տարի-  
ներ հետո Ղարաբաղի խնդիրը դեռ մեզ հետ է»:

Արցախյան ճարտարապետության տեսություն-  
ը մեզ ներկայացնում է արվեստագրան Մարիա  
Աղայանին, լայն Կոմիտեն: «Ճարտարապետու-  
թյունը Ղարաբաղում» վերնագիրը կրող այս  
հոդվածը Շահեն Մկրտչյանի «Լեռնային Ղարա-  
բաղի պատմական հուշարձանները» գույց կո-  
րողային աշխատություններից հետո միակն է.  
որ ամբողջական պատկերացում է տալիս Ար-  
ցախի շինարվեստի մասին:

Պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան  
Արցախ նահանգը, բնե երկրի ծայրամասում է.  
սակայն լեզվով, ավանդույթներով ու մշակույ-  
թով սերտ կապ ունի բուն երկրի հետ: Դա  
վառ ապագուուն է ճարտարապետական ուրույն  
զարգացր, որը հազար ու մի թեյերով կապված է  
բուն հայկականին: Մարիա Կոմիտենն փորձում է  
ցույց տալ այս երկույթը համեմատական պատ-  
կերի յուսի ներքո: Այսպիսով բնաստեղծական  
չբանի մաղազույն հուշարձանատիպից՝ վկայա-  
բանից (Ամարասի վանքում), հասնում է մինչև  
19-րդ դարի էմիսածնատից Շուշիի Ղազանչե-  
ցոց եկեղեցուն: Հոդվածում հեղինակը ի մաս-

նավորումն խոսում է բազիլիկ տիպի յայն տա-  
րածման մասին՝ թի՛ միանավ մատուցների  
ձևով (Թոի եկեղեցի, Եղիշե առաքյալ...) և թե՛  
եռանավ եկեղեցիների (յուզագույն օրինակը՝  
Միծեռնավանք): Մոխրեմիսի եկեղեցին՝ երբեմնի  
Օխտր Դոնե վանքի եկեղեցիներից մեկը, Կամ-  
նենոն դասում է զվարթնացատիպը հիշեցնող  
քառակոնք եկեղեցիների շարքում: Արցախում  
հանդիպում ենք նաև 12—13 ղղ ղղ. Հայաստա-  
նում շատ տարածված փոքր խաչան կենտրո-  
նակազմ եկեղեցիների (Վանաասարում, Ամենա-  
փրկիչ վանքում...):

Հոգևոր համալիրները դառնում են մշակույ-  
թի օջախներ, կրթության ու գրչության կենտ-  
րոններ: Վերոհիշյալներից են հուշակավոր Դա-  
ղիվանքը, Եղիշե Առաքյալի վանքը, Խարազվան-  
քը, Հակոբավանքը, Դանձասարը և այլն: Մարիա  
Աղայանը բնագծում է, որ այս բոլոր համա-  
լիրներում կրկնվում են շինարարական ու ճար-  
տարապետական միևնույն առանձնահատկու-  
թյունները, որոնք հանդիպում են հայկական  
մյուս վանքերում (պատկերաբանակների ճա-  
խություն, կենդանական, բուսական և երկրա-  
չափական մոտիվների օգտագործում, տարբեր  
գույնի ֆարերի ընտրություն և այլն):

17—18-րդ ղղ-ում շինարվեստը նոր վերելք  
է ապրում: Կառուցվում են նոր վանքեր, գյու-  
ղական եկեղեցիներ: Միածամանակ մեծ աշխա-  
տանք է տարվում հները ընդարձակելու ու վե-  
րանորոգելու: Անցնելով աշխարհիկ ճարտարա-  
պետությանը՝ Մարիա Կոմիտեն գրում է, որ  
դա պետք է առանձին գլխով ներկայացվեր: Սա-  
կայն այս սուղ էջերում անգամ նա աշխատել է  
անուշադրության շատունել նաև այդ բնագավա-  
րը: Առայսօր կանգուն մնացած ոչ-կրոնական  
շինությունները մեծ սառած վանքերի շրջա-  
փակում են բերանաված, տարբեր նպատակների  
ծառայող օժանդակ շինքներ են (գավիթ, ժամա-  
տուն, գրատուն, օնդանատուն, ձիթհան, մառան,  
խուց...): Դաղիվանքը նման շինքերի մի ամ-  
բողջ համակարգ է: Պաշտպանական կառույցնե-  
րը, որոնցով շատ հարուստ է Առնային Ղարա-  
բաղը, իշխանական ընտանիքների տոհմական  
կալվածքներ են հանդիսացել: Բնական պատ-  
նեշներին լրացուցիչ ամրություն տալով՝ բար-  
ձր լեռների ու բլուրների ճեղքները բարձրվին  
անմատչելի են դարձել՝ շեղանակ աղյուսի կա-  
ռուցված դղյակների: Բերդերի այս ամուր ցան-  
ցը (Չարաբերդ, Քալիչ, Քարխանաբերդ, Կալա-  
դաբերդ...) պաշտպանել է նաև երանց մոտակա  
հովանավորյալ վանքերը, մեծատաններն ու  
մշակույթի օջախները (Երից Մանկանց, Հորե-  
կավանք, Գանձասար, Հակոբավանք): Մուր և  
խաչ միասնաբար պաշտպանել են պապեղական  
հողերը:

Հայտնի ճարտարապետ, հայ շինարարվեստի  
բաշ գիտակ Պաղոս Կոնեան հետաքրքիր ձևով է  
ներկայացնում դարաբարդան հուշարձանները.  
«Համառոտ ցուցակ պատմական Արցախի շր-  
ջանի կրոնական հուշարձանների»: Վերնագիրը  
արդեն հուշում է կորողների գասակարգված լի-

նելը: Եվ իրոք, եկեղեցիների խմբավորումը կատարվել է հետևյալ կերպ. նախ՝ խաչածև և ֆառախորան եկեղեցիներ, հետո միանավ մատուներ ու եկեղեցիներ, միանավ՝ ավանդատնով եկեղեցիներ, երկու ազատ սյուններով բազիլիկներ, 4 կամ 6 ազատ սյուններով բազիլիկներ և վերջապես վանական համալիրներ:

Գրքի վերջում առանձին ենթավերնագրով խոսք կա այսպես կոչված դասական հատարապետական ձևերի վերածննդի մասին, որն ընդգրկում է 19—20-րդ դարերի ցարական Ռուսաստանի իշխանության տարիները: Ամենամեծ և ամենանշանավոր եկեղեցիներն են Շուշի ֆաղափի Ղազանչեցոց կամ ս. Ամենափրկիչ և Կանաչ ժամ եկեղեցիները:

Գիրքը զարդարում են բազմաթիվ պատմական, ինչպես նաև հուշարձանները ցուցադրող ֆարտեզներ և լուսանկարների ճոխ հավաքածու: Վերջիններս հեղինակների մեջ արժե հիշատակել

հել հուշարձանների պահպանության վարչության աշխատակից՝ Սամվել Կարապետյանի ահույնը, որը տարիներ շարունակ կենսային Ղարաբաղն իր աշխատանքի հշանակետը դարձրած, ի գին ամեն դժվարությունների ու վտանգների, կարողացել է լուսանկարել այս բարձրորակ պատկերները և հարուստ նյութ հավաքել այդ ժամանակ «արգելված գոտի» համարվող Ղարաբաղի վերաբերյալ: Պետք է նշել, որ ըստ մեր վերջին տվյալների ՕԷՄՄ-ի հրատարակչությունը պատրաստում է պատմական Արցախին նվիրված մի երկրորդ գիրք ևս, ուր տեղ կգտնեն այս հատորում ըստ ամենայնի շուտամնասիրված աշխարհիկ հատարապետությունը (գյուղական մենատները, իշխանական սպարանները, զրդյակներն ու քերդերը):

Ա. Տ. ՂԱԼԱԶՅԱՆ